1. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՀԱՃԱԽԵԼ ԵԿԵՂԵՑԻ

Յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյայի պարտքն է հաճախել եկեղեցի, հատկապես կիրակի և տոն օրերին մասնակցելու Սբ. Պատարագի արարողությանը: Եկեղեցին աղոթքի տուն է և մոմ վառելը եկեղեցի հաճախելու պարտադիր պայման չէ, կարևորը աղոթքն է և համապատասխան կանոնների պահպանումը.

1. Եկեղեցի մտնելիս պետք է խաչակնքվել:
2. Եկեղեցի մտնելիս պետք է լինել մարմնապես ու հոգեպես մաքուր, սթափ մտքով:
3. Եկեղեցի պետք է մտնել պատշաճ և վայելուչ հագուստով (սպորտային հագուստով կամ կիսավարտիքով չի կարելի մտնել եկեղեցի):
4. Տղամարդիկ եկեղեցի պետք է մտնեն գլխաբաց, կանայք՝ գլուխները գլխաշորով ծածկած:
5. Արգելվում է հարբած վիճակում եկեղեցի մտնել:
6. Արգելվում է զենքով եկեղեցի մտնել:
7. Եկեղեցի պետք է մտնել անաղմուկ, զգույշ քայլերով:
8. Եկեղեցում պետք է պահպանել կատարյալ լռություն, բարձրաձայն չաղոթել, չզրուցել:
9. Անջատել բջջային հեռախոսները:
10. Սուրբ Խորանի, Սուրբ Ավազանի և սրբապատկերների առջև մեջքով չկանգնել, կանգնել միշտ դեպի արևելք՝ հայացքը ուղղած դեպի Սուրբ Խորանը:
11. Եկեղեցում ձեռքերը գրպանը չդնել:
12. Ծեսի ընթացքում քահանայի աղոթքի, Սուրբ Ավետարանի ընթերցման և հավատամքի ժամանակ պետք է ոտքի կանգնել:
13. Սուրբ Խաչը կամ Սուրբ Ավետարանը համբուրելուց առաջ պետք է ասել՝Մեղայ Աստուծոյ՝և խաչակնքվել:
14. Եկեղեցուց դուրս գալիս շրջվել դեպի Սուրբ Խորանը, խոնարհվել և խաչակնքվել:

http://holytrinity.am/posts/view/32

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

2 Կորնթացիներ 13 , 5-13

5Քննեցէ՛ք դուք ձեզ՝ տեսնելու, թէ նոյն հաւատի մէ՞ջ էք.
փորձեցէ՛ք դուք ձեզ. չգիտէ՞ք, թէ Քրիստոս Յիսուս ձեր մէջ է,
այլապէս կը լինէիք անպիտան։ 6Բայց յոյս ունեմ, թէ
կ՚իմանաք, որ մենք անպիտան չենք։ 7Եւ աղաչում ենք
Աստծուն, որ չարը ձեզ բան չանի. ո՛չ որպէսզի մենք ընտիր
երեւանք, այլ որպէսզի դուք բարին գործէք, հոգ չէ, թէ մենք
անպիտան թուանք. 8քանի որ չենք կարող հակառակել
ճշմարտութեանը, այլ պաշտպան ենք
ճշմարտութեան։ 9Ուրախ ենք, երբ մենք տկար ենք, եւ դուք
զօրաւոր էք։ Նոյն բանի համար էլ աղօթում ենք, որ դուք
հաստատուն լինէք։ 10Ուստի հեռուից գրում եմ այս բանը, որ,
երբ գամ, խստութեամբ չվարուեմ Տիրոջ ինձ տուած
իշխանութեամբ, որ շինելու համար է եւ ոչ՝ քանդելու։ 11Եւ
վերջապէս, եղբայրնե՛ր, ո՛ղջ եղէք, հաստատո՛ւն մնացէք,
մխիթարուեցէ՛ք, միաբա՛ն եղէք, խաղաղութի՛ւն արէք. եւ
խաղաղութեան ու սիրոյ Աստուածը թող լինի ձեզ
հետ։ 12Ողջո՛յն տուէք միմեանց սուրբ համբոյրով. բոլոր
սրբերը ողջունում են ձեզ։ 13Մեր Տէր Յիսուս Քրիստոսի
շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ
հետ լինեն։ Ամէն։

Մարկոսի Ավետարան 11, 27-33

27ու ասացին նրան. «Ի՞նչ իշխանութեամբ ես դու այդ անում,
եւ ո՞վ տուեց քեզ այդ իշխանութիւնը»: 28Յիսուս
պատասխան տուեց եւ ասաց նրանց. «Ես էլ ձե՛զ մի բան
հարցնեմ, պատասխանեցէ՛ք ինձ, եւ ես ձեզ կ՝ասեմ, թէ ինչ
իշխանութեամբ եմ այս անում:29Յովհաննէսի մկրտութիւնը
երկնքի՞ց էր, թէ՞՝ մարդկանցից. պատասխանեցէ՛ք
ինձ»: 30Նրանք իրար միջեւ խորհում էին ու ասում. «Եթէ
ասենք՝ երկնքից, մեզ կ՝ասի՝ իսկ ինչո՞ւ նրան
չհաւատացիք. 31իսկ եթէ ասենք՝ մարդկանցից, ժողովրդից
ենք վախենում». որովհետեւ բոլորը գիտէին, թէ
Յովհաննէսը մարգարէ էր: 32Պատասխան տուեցին եւ
Յիսուսին ասացին՝ չգիտենք. եւ Յիսուս նրանց
պատասխանեց ու ասաց. «Ես էլ ձե՛զ չեմ ասի, թէ ինչ
իշխանութեամբ եմ այս անում»:



	ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	
1.	12:00 - 12:45	Հայոց Պատմության /երիտասարդներ
2.	13:00 - 13:45	Հոգևոր դաս /երիտասարդներ (Ծ.Վրդ. Պետրոս Պետրոսյան)
3.	14:00 - 14:45	Հայոց լեզու /երիտասարդներ (Ա.Գևորգյան)
4.	15:00 - 15:45	Հայոց լեցու ավագ ենթախումբ (Ա.Գևորգյան)
		Խոսքի զարգացում կրտսեր ենթախումբ (Վ.Ասատրյան)
5.	16:00 - 16:45	Հայոց լեզու կրտսեր ենթախումբ (Ա.Գևորգյան)
		Խոսքի զարգացում ավագ ենթախումբ (Վ.Ասատրյան)
6.	17:00 - 17:30	Զարգացնող խաղեր (երգ, ոտանավոր, հեքիաթի ընթերցում) (Վ.Ասատրյան, Ա.Գևորգյան)

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

2008թ. ի վեր Մոսկվայի հայ կաթողիկե եկեղեցու կիրակնօրյա դպրոցը հայ ոսկեղենիկ լեզուն հասանելի է դարձնում հայրենիքից հեռու հայազգի մանուկներին և երիտասարդներին: Շնորհիվ հարգարժան տիկին Իսկուհի Համբարձումյանի՝ երկու տասնյակից ավել մանուկներ և պատանիներ սովորել են հայերեն գրել, կարդալ: Ցավոք սրտի անձնական խնդիրների պատճառով տիկին Իսկուհու հետ համագործակցելն անհնար է դարձել, սակայն ի ուրախություն հայ համայնքի՝ հայոց լեզվի ուսուցչի դերում հանդես կգա հրաշալի մի հայուհի՝ Անի Գևորգյանը: Վերջինս հաճույքով ստանձնել է ուսուցչի պարտականությունները և ամեն կիրակի պատրաստ է իր ծառայությունները մատուցել կիրակօրյա դպրոց հաճախող սաներին:

Անի Գևորգյանը ծնվել է 1991թ. Երևանում, 2008թ. ավարտել է Դերենիկ Դեմիրճյանի անվան դպրոցը: 2008-2012թթ. ավարտել է Երևանի Հրաչյա Աճառյանի պետական համալսարանի մանկավարժության ֆակուլտետը: Ունի մանկավարժի կոչում: Աշխատանքային և ուսանողական գործունեությունը համատեղել է Երևանում մասնավոր պարապմունքներով: Ինչպես նաև 2004-2008 թթ. սովորել և ավարտել է Երևանում Սոֆի Դևոյանի «Հոգու և Մշակույթի» պարի դպրոցը: Պրոֆեսիոնալ պարուհի է, նախընտրում է ազգագրական պարեր: Երկու տարուց ավել բնակվում է Մոսկվայում: Պարում է Մոսկվայի Հայորդիք անսամբլում, հայերենի մասնավոր դասեր է տալիս: Ամուսնացած չէ: Ապրում է ծնողների հետ:

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՅՐ ՊԵՏՐՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ

Հարգելի հայրենակիցներ, երկարատև արձակուրդից հետո

սկսում ենք մեր գործունեությունը՝ նոր նպատակներով և նոր գաղափարներով հարստացած: Մոսկվայի Հայ կաթողիկե համայնքի հոգևոր առաջնորդ Ծայրագույն վարդապետ հայր Պետրոս Պետրոսյանի անմիջական առաջնորդությամբ, Գերաշնորհ Տեր Ռաֆայել Արքեպիսկոպոս Մինասյանի օրհնությամբ՝ հրավիրում ենք բոլորին աղոթքի պատերազմների, հիվանդությունների և մարդկության առջև ծառացած արդիական խնդիրների հաղթահարման համար: Հայ ժողովրդի համար 2015 թվականը բեկումնային տարի է, սա մի ժամանակահատված է, երբ աշխարհի բոլոր հայերը, անկախ իրենց գտնվելու տարածաժամանակային գործոններից, պետք է համախմբվեն մեկ նպատակի շուրջ որն է՝ վերջնակետի հասցնել հայի արդար պահանջը՝ Հայկական Հարցը: 1915 թվականին Օսմանյան Թուրքիայի կողմից հայ ժողովրդի հանդեպ իրականացված ոճրագործության հարյուրամյակի շեմին ենք, և ամբողջ աշխարհը

մեր երեսին է նայում: Հարկ է, որ հավուր պատշաճի ներկայանանք միջազգային ասպարեզում, և մեր ձայնը լսելի դարձնենք ամենուր: Կազմակերպվում են բազմազան պատմամշակութային, հոգևոր միջոցառումներ, գիտական կոնֆերանսներ և այլ ձեռնարկներ ամբողջ աշխարհում, որտեղ գոնե մեկ հայ կա: Մոսկվայի հայ կաթողիկե համայնքը ևս անմասն չի մնա: Ժողովրդապետարանի գործունեության ամենամյա ժամանակացույցում այս տարի մեծ ուշադրություն ենք հատկացրել Ցեղասպանության հարցի արծարծմանը և Եղեռնի հիշատակման միջոցառումներին: Կոչ ենք անում բոլորին ակտիվություն դրսևորել բոլոր ձեռնարկներին մասնակցելու ուղղությամբ:

Ինչպես մյուս տարիներին՝ ուշադրության կարժանանան ազգային և հոգևոր բոլոր տոները և հիշարժան ամսաթվերը: Պետք է նշել, որ ներկայումս ակտիվ աշխատանքներ են տարվում դեկտեմբեր ամսվա մեջ տեղի ունենալիք «ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ» միջոցառման ուղղությամբ, որին ակնկալում ենք մեր համայնքի տաղանդավոր բոլոր երեխաների, պատանիների և երիտասարդների ակտիվ մասնակցությունը:

Ի ուրախություն պետք է նշել, որ բավականին մեծ է հետաքրքրությունը հայոց լեզվի ուսուցման հանդեպ, թե երեխաների և թե երիտասարդների շրջանակում:

Գրաճանաչության և Խոսքի զարգացման դասերին մասնակցել ցանկացողների թիվը հասնում է հիսունի, որը ի համեմատ անցած տարիների՝ բավականին մեծ ցուցանիշ է և խոսում է այն բանի մասին, որ ազգային ինքնության գիտակցությունը արթուն է: Կիրակի օրերին ժամը 11:00-ից մինչ 17:30 գործում է դպրոցը բոլոր ցանկացողների համար:

Աղոթենք միասին, որ մեր ընտանիքներում թագավորեն առողջությունը, խաղաղությունը, սիրով և միաբան լինենք, միշտ պատրաստ փոխըմբռնման, ներենք և ընդառաջ գնանք միմյանց. միայն այդ ժամանակ ներդաշնակություն կլինի մեր սրտերում և մեր փոխհարաբերություններում: Թե դժվարության և թե ուրախության ժամանակ հիշենք Մայր Եկեղեցին, որը տունն է ամենքիս, որտեղ միշտ կարող ենք գտնել սփոփանք, մխիթարանք, հոգեկան հավասարակշռություն և խաղաղություն:

Օրհնյալ լինեք Սուրբ Հոգու շնորհներով, ապրեք խաղաղությամբ, և Տերը թող ամենքիդ հետ լինի: Ամեն

Ծայրագույն Վարդապետ Հայր Պետրոս Պետրոսյան

Մոսկվա 5 հոկտեմբերի 2014թ.